ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 176-Ա
« 11 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14, 15 և 16-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ժամը 11:00-ի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Վայոց ձորի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Սրբուհի Դավթյանին:
3. Հանձնաժողովի լիազորությունները դադարեցվում են սահմանված կարգի համաձայն:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9/11/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ սեպտեմբերի 11-ի N 176-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ընտրության 2023 թվականի սեպտեմբերի 12-ի ժամը 11:00-ի մրցութային հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝

Դավիթ Սարգսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Արսեն Կարապետյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Տատյանա Պոլուդնիցինա	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Արամ Կոստանյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
Նարինե Մաղաքյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Անահիտ Սարգսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ